«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա._____
«23» հունիսի 2026 թ.

МОО ВО Российско-Армянский университет
Իրավունքի ինստիտուտ
Институт права

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ., ավագ դասախոս Սարգսյան Ա.Գ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Սահմանադրական արդարադատություն

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Բովանդակությունը

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....4

1.1. ՏՎՅԱԼ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....4

1.2. ԾԱՎԱԼԸ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՐԵԴԻՏՆԵՐՈՎ և ԺԱՄԵՐՈՎ.....3

1.3. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....4

2. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ.....5

2.1. ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ.....5

2.2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՕԲՅԵԿՏԸ և ԱՌԱՐԿԱՆ.....5

2.3. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ և ՄԵԹՈԴՆԵՐԸ.....6

2.4.ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՇԽԱՏԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄ ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ (ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԺԱՄԵՐՈՎ).....6

2.5. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԻ ԲԱՇԽՈՒՄ (ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԺԱՄԵՐՈՎ) ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ և ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ.....8

ԹԵՄԱ 1. ԴԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ և ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃՅՈՒՂ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ և

ԹԵՄԱ 2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ և ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

ԹԵՄԱ 3. ԴԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ և ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԹԵՄԱ 4. ԴԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

ԹԵՄԱ 5. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆ, ՆՐԱ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԹԵՄԱ 6. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ և ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԸ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԹԵՄԱ 7. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ և ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ

ԹԵՄԱ 8. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ: ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԹԵՄԱ 9. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ԱՅԼ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

ԹԵՄԱ 10. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱԿՏԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ և ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԹԵՄԱ 11. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ և ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԹԵՄԱ 12. ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ (ՎԱՐՈՒՅԹԻ) ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ԹԵՄԱ 13. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ և ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԹԵՄԱ 14. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՆԳԱՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ (ՄՈԴԵԼՆԵՐԸ), ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԹԵՄԱ 15. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋև ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ 16. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ, ՆԱԽԱԳԱՀԻ, ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ և ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԳՈՐԾԵՐԻ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ, ՀԱՆՐԱՔՎԵԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ, ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ 17. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ 18. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԿԱՄ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԻ և ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ և ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ

2.5.1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆԵՐԸ և ԾԱՎԱԼՆԵՐԸ.....11

3. ՏԵՍԱԿԱՆ ԲԼՈԿ.....17

3.1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՆՅՈՒԹԵՐԸ.....175

3.1.1. Դասագիրք(եր).....17

3.1.2. Իրավական ակտեր.....15

3.1.3. Էլեկտրոնային ռեսուրսներ.....15

4. ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ և ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ 16

4.1.1. Վերլուծական կարողություններ 16

4.1.2. Իրավական փաստարկում.....17

4.1.3. Հստակություն և ընկալելիություն.....17

4.1.4. Համակարգվածություն և կառուցվածքայնություն.....18

4.2. Ստուգողական առաջադրանքների և գիտելիքների գնահատման համար անհրաժեշտ այլ նյութերի տիպային օրինակներ.....21

4.2.1. Սեմինար պարապմունքների քննարկման հարցեր.....21

4.2.2. Քննության հարցեր.....25

4.2.3. Իրավիճակային խնդիրների օրինակներ.....27

4.2.4. Տեսական հարցերի օրինակներ.....28

4.2.5. Թեստային հարցի օրինակ.....28

4.3. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, ՈՐՈՆՔ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ 28

4.3.1. Գիտելիքների ընթացիկ հսկողության ձևերը..... 27

4.3.2. Ատեստավորման ձևը (ստուգարք, քննություն) 28

4.3.3. Գնահատման ընթացակարգը..... 29

4.3.4. Գնահատման չափանիշներ 29

4.3.5. Ուսանողների նախապատրաստման առաջարկություններ..... 28

1. Ներածություն

1.1. Տվյալ առարկայի բովանդակության համառոտ նկարագրությունը

Դասընթացը ներառում է սահմանադրական արդարադատություն, դատական սահմանադրական իրավունք և դատական սահմանադրական դատավարություն, սահմանադրական հսկողություն և սահմանադրական վերահսկողություն հասկացությունների ուսումնասիրությունը, դրանց տեղն ու դերը պետության իրավական համակարգում: Այս դասընթացը հիմնված է դատական սահմանադրական իրավունքի և դատական սահմանադրական դատավարության հետազոտության վրա՝ դրանց նյութական բովանդակության և իրականացման ընթացակարգային ձևի միասնության մեջ:

«Սահմանադրական արդարադատություն» դասընթացի նպատակն է ապահովել ուսանողների կողմից սահմանադրական վերահսկողության օբյեկտների և սուբյեկտների, ձևերի և մոդելների, Սահմանադրական դատարանի կազմի, կառուցվածքի և ձևավորման ուսումնասիրությունը, Սահմանադրական դատարանի դատավորների իրավական կարգավիճակի և Սահմանադրական դատարանի գործունեության սկզբունքների իմացությունը, ինչպես նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության ընդհանուր կարգի, դատարանի լիազորությունների և առանձին գործերով քննության կարգի առանձնահատկությունների համալիր գիտելիքների յուրացումը:

1.2. Ծավալը ակադեմիական կրեդիտներով և ժամերով

Առարկայի ծավալը՝ 144 ժամ, կրեդիտ՝ «4» ECTS:

1.3. Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

ընդհանրական իմացական հմտությունները՝

- Սահմանադրական արդարադատության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական հիմնական ակտերը.
- Սահմանադրական դատարանի լիազորությունները և դրանց առանձնահատկությունները:

կարողանա՝

գործնական կիրառման հմտությունները՝

- Գործնականում կիրառել ձեռք բերված գիտելիքները.
- Կատարել վիճահարույց իրավիճակների իրավական վերլուծություն:

ունակ լինի՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

- Ինքնուրույն յուրացնել նորմատիվ իրավական ակտերը և ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկան.
- Վերլուծել սահմանադրական դատավարության աղբյուր հանդիսացող նորմատիվ իրավական ակտերը.
- Կարողանալ կազմել ոլորտին առնչվող իրավական փաստաթղթեր:

2. Առարկայական ծրագիրը

2.1. Նպատակը և խնդիրները

«Սահմանադրական դատավարություն» դասընթացի նպատակն է ուսանողների կողմից սահմանադրական դատավարության և արդարադատության

Առարկայի հիմնական խնդիրներն են՝

- ուսումնասիրել սահմանադրական դատարանների կազմավորման և գործունեության իրավական կարգավորման բովանդակությունը տարբեր երկրներում դատական սահմանադրական վերահսկողության իրականացման համատեքստում.
- օգնել ուսանողներին հասկանալ վերաբերելի մի շարք հասկացությունների առանձնահատկությունները, գործնականում այդ կապակցությամբ առաջացող խնդիրները.
- բացահայտել ներկա պայմաններում սահմանադրական արդարադատության զարգացման և կատարելագործման ուղիները.
- ուսումնասիրել սահմանադրական արդարադատության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, դիտարկելով մի շարք այլ պետությունների սահմանադրական դատարանի ստեղծման և գործունեության առանձնահատկությունները.
- պատկերացում կազմել ՀՀ Սահմանադրական դատարանի լիազորությունների մասին՝ ուսումնասիրելով դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

2.2. Դասընթացի օբյեկտը և առարկան

«Սահմանադրական դատավարություն» դասընթացի ուսումնասիրության օբյեկտ հանդիսանում է սահմանադրական արդարադատության ոլորտը կարգավորող այլ իրավունքի աղբյուրները:

«Սահմանադրական դատավարություն» դասընթացի առարկան՝ դատական սահմանադրական վերահսկողության իրականացման, Սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության առանձնահատկություններն են:

Դասընթացի մուտքային պահանջները:

«Սահմանադրական դատավարություն» դասընթացի շրջանակներում, առավել արդյունավետ կրթական վերջնարդյունքների ձևավորման համար, ուսանողներին անհրաժեշտ են բազային գիտելիքներ պետության և իրավունքի տեսությունից, սահմանադրական իրավունքից, ինչպես նաև հարակից մի շարք այլ իրավունքի ճյուղեր ուսումնասիրող առարկաներից:

2.3. Դասավանդման եղանակները և մեթոդները

«Սահմանադրական դատավարություն» դասընթացն անցկացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Գործնական պարապմունքների նպատակն է օգնել ուսանողներին ուսումնասիրել դասընթացի կարևորագույն խնդիրները, խորացնել և համակարգել ուսանողների գիտելիքները տվյալ ոլորտում:

«Սահմանադրական դատավարություն» դասընթացն ուսումնասիրելիս կարևոր դեր է խաղում նաև ուսանողների ինքնուրույն աշխատանքը:

«Սահմանադրական դատավարություն» դասընթացի ընթացքում կիրառվում են բացատրական, տեղեկատվական, գործնական, համեմատական, հետազոտման և մասնակի որոնման մեթոդները:

2.4. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Կամընտրական դասընթացների կրթաբլոկում»՝ 4 ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 34 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 4-րդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1.Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	144
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	64
1.1.1.Դասախոսություններ	32
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	32
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	80
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	Քննություն

2.5. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսություններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. Դատական սահմանադրական իրավունք և դատավարություն՝ որպես իրավունքի ճյուղ, գիտություն և ուսումնական դասընթաց	2	1	1
Թեմա 2. Սահմանադրական վերահսկողության սուբյեկտները և օբյեկտները	2	1	1
Թեմա 3. Դատական սահմանադրական վերահսկողության ձևերը և դրանց առանձնահատկությունները	2	1	1
Թեմա 4. Դատական սահմանադրական վերահսկողության կայացման և զարգացման հիմնական փուլերը	4	2	2
Թեմա 5. Սահմանադրական դատարանը՝ որպես պետական իշխանության մարմին, նրա տեղն ու դերը պետական իշխանության մարմինների համակարգում, այլ մարմինների հետ փոխհարաբերությունները	4	2	2
Թեմա 6. Սահմանադրական դատարանների կազմավորման կարգը և առանձնահատկությունները, ՀՀ Սահմանադրական դատարանի կազմը և կառուցվածքը	4	2	2
Թեմա 7. ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կառուցվածքը և լիազորությունները: Ծառայությունը ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմում	4	2	2

Թեմա 8. Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակը: ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակի հիմնական սկզբունքները	4	2	2

Թեմա 9. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի նյութական, սոցիալական և այլ երաշխիքները, Սահմանադրական դատարանի գործունեության ֆինանսական երաշխիքները	4	2	2
Թեմա 10. Սահմանադրական դատարանների ակտերի տեսակները, կառուցվածքը, ընդունման կարգը և առանձնահատկությունները, սահմանադրական դատարանների իրավական դիրքորոշումները	4	2	2
Թեմա 11. Սահմանադրական դատարանում գործերի քննության հիմնական փուլերը և ընդհանուր պայմանները	4	2	2
Թեմա 12. Գործերի քննության (վարույթի) սկզբունքները Սահմանադրական դատարանում	4	2	2
Թեմա 13. Սահմանադրական դատարանների լիազորությունների հասկացությունը և տեսակները	4	2	2
Թեմա 14. Անհատական սահմանադրական գանգատի տեսակները (մոդելները), Սահմանադրական դատարանում անհատական սահմանադրական գանգատների քննության հիմնական առանձնահատկությունները	4	2	2

Թեմա 15. Սահմանադրական դատարանում Սահմանադրության մեկնաբանության, սահմանադրական մարմինների միջև սահմանադրական վեճերի լուծման, իրավական ակտերի Սահմանադրությանը համապատասխանության, միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության վերաբերյալ ստուգման գործերի քննությունը	4	2	2

Թեմա 16. Սահմանադրական դատարանում հանրաքվեի արդյունքում, Նախագահի, Ազգային ժողովի ընտրությունների արդյունքում կայացված որոշումների հետ կապված վեճերի լուծումը, տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների և գլխավոր դատախազի դիմումների հիման վրա գործերի քննությունը, Սահմանադրության նախագծի Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու, հանրաքվեի ներկայացված իրավական ակտերի նախագծերի, Ազգային ժողովի ընդունած օրենքի համապատասխանությունը Սահմանադրությանը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը	4	2	2
Թեմա 17. Սահմանադրական դատարանում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու, Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, լիազորությունները դադարեցնելու, Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական գործ հարուցելու համաձայնություն տալու մասին գործերի քննությունը	4	2	2

Թեմա 18. Սահմանադրական դատարանում Նախագահի լիազորություններն իրականացնելու անհնարինության, Նախագահի պաշտոնանկության հիմքերի առկայության, կուսակցությունների գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ եզրակացություն տալու վերաբերյալ գործերի քննությունը, Նախագահի կողմից հրամանագրերի և կարգադրությունների ընդունման և կառավարության ձևավորման հետ	4	2	2

կապված հարցերով գործերի քննությունը			
Ընդամենը	64	32	32

2.5.1. Դասընթացի թեմաները և ծավալները

Թեմա 1. Դատական սահմանադրական իրավունք և դատավարություն՝ որպես իրավունքի ճյուղ, գիտություն և ուսումնական դասընթաց

Դատական սահմանադրական իրավունք և դատավարություն, սահմանադրական վերահսկողություն, դատական սահմանադրական վերահսկողություն, սահմանադրական դատավարություն, սահմանադրական արդարադատություն հասկացությունները

Թեմա 2. Սահմանադրական վերահսկողության սուբյեկտները և օբյեկտները

Դատական սահմանադրական վերահսկողության օբյեկտները, սահմանադրական վերահսկողության սուբյեկտները, սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտները

Թեմա 3. Դատական սահմանադրական վերահսկողության ձևերը և դրանց առանձնահատկությունները

Նախնական և հետագա, կոնկրետ և վերացական, պարտադիր և ֆակուլտատիվ, ֆորմալ (ըստ ձևի) և նյութական (ըստ բովանդակության), որոշիչ և խորհրդատվական սահմանադրական վերահսկողություն

Թեմա 4. Դատական սահմանադրական վերահսկողության կայացման և զարգացման հիմնական փուլերը

Դատական սահմանադրական վերահսկողության ձևավորման չորս փուլերը, սահմանադրական արդարադատության ամերիկյան և եվրոպական մոդելների առանձնահատկությունները

Թեմա 5. Սահմանադրական դատարանը՝ որպես պետական իշխանության մարմին, նրա տեղն ու դերը պետական իշխանության մարմինների համակարգում, այլ մարմինների հետ

Սահմանադրական դատարանը՝ որպես պետական իշխանության մարմին, փոխհարաբերությունները այլ մարմինների հետ, սահմանադրական դատարանը՝ որպես դատական իշխանության մարմին, փոխհարաբերությունները այլ դատարանների հետ

Թեմա 6. Սահմանադրական դատարանների կազմավորման կարգը և առանձնահատկությունները, ՀՀ Սահմանադրական դատարանի կազմը և կառուցվածքը

Սահմանադրական դատարանների կազմավորումը, ՀՀ Սահմանադրական դատարանի կազմը, ձևավորման կարգը և առանձնահատկությունները

Թեմա 7. ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կառուցվածքը և լիազորությունները: Ծառայությունը ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմում

ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմը, ձևավորման կարգը, լիազորությունները, ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմում ծառայության իրավական հիմքերը և առանձնահատկությունները

Թեմա 8. Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակը: ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակի հիմնական սկզբունքները

ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի իրավական կարգավիճակի հասկացությունը, ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի իրավական կարգավիճակի հիմնական սկզբունքները՝ դատավորի անկախությունը, անփոփոխելիությունը, անձեռնմխելիությունը, այլ գործունեության հետ պաշտոնի անհամատեղելիությունը, ապաքաղաքականացվածությունը

Թեմա 9. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի նյութական, սոցիալական և այլ երաշխիքները, Սահմանադրական դատարանի գործունեության ֆինանսական երաշխիքները

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով նախատեսված՝ ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի և Սահմանադրական դատարանի գործունեության երաշխիքները

Թեմա 10. Սահմանադրական դատարանների ակտերի տեսակները, կառուցվածքը, ընդունման կարգը և առանձնահատկությունները, սահմանադրական դատարանների իրավական դիրքորոշումները

Սահմանադրական դատարանների ակտերի տեսակները, որոշումների և եզրակացությունների ընդունման կարգը և առանձնահատկությունները, Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումները, Սահմանադրական դատարանի որոումներում արտահայտված իրավական դիրքորոշումների իրավաբանական ուժն ու նշանակությունը

Թեմա 11. Սահմանադրական դատարանում գործերի քննության հիմնական փուլերը և ընդհանուր պայմանները

Սահմանադրական արդարադատության հիմնական փուլերը, դրանց առանձնահատկությունները, ՀՀ Սահմանադրական դատարանում գործերի քննության ընդհանուր պայմանները

Թեմա 12. Գործերի քննության (վարույթի) սկզբունքները Սահմանադրական դատարանում

Սահմանադրական դատարանում գործերի քննության (վարույթի) հիմնական սկզբունքների հասկացությունը և տեսակները

Թեմա 13. Սահմանադրական դատարանների լիազորությունների հասկացությունը և տեսակները

Սահմանադրական դատարանների լիազորությունները, դրանց տեսակները, ՀՀ Սահմանադրական դատարանի լիազորությունների առանձնահատկությունները

Թեմա 14. Անհատական սահմանադրական գանգատի տեսակները (մոդելները), Սահմանադրական դատարանում անհատական սահմանադրական գանգատների քննության հիմնական առանձնահատկությունները

Անհատական սահմանադրական գանգատի (բողոքի) հասկացությունը, տեսակները (մոդելները) և դրանց առանձնահատկությունները, ՀՀ Սահմանադրական դատարանում անհատական սահմանադրական գանգատների քննության առանձնահատկությունները

Թեմա 15. Սահմանադրական դատարանում Սահմանադրության մեկնաբանության, սահմանադրական մարմինների միջև սահմանադրական վեճերի լուծման, իրավական ակտերի Սահմանադրությանը համապատասխանության, միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության վերաբերյալ ստուգման գործերի քննությունը

Սահմանադրության մեկնաբանման վերաբերյալ գործերի քննությունը սահմանադրական դատարաններում և սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում, իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում, միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության ստուգումը

Թեմա 16. Սահմանադրական դատարանում հանրաքվեի արդյունքում, Նախագահի, Ազգային ժողովի ընտրությունների արդյունքում կայացված որոշումների հետ կապված վեճերի լուծումը, տեղական ինքնակառավարման

մարմինների, դատարանների և գլխավոր դատախազի դիմումների հիման վրա գործերի քննությունը, Սահմանադրության նախագծի Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու, հանրաքվեի ներկայացված իրավական
ակտերի նախագծերի, Ազգային ժողովի ընդունած օրենքի համապատասխանությունը Սահմանադրությանը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը

Հանրաքվեների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծումը ՀՀ Սահմանադրական դատարանում, Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծումը ՀՀ Սահմանադրական դատարանում, Նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծումը ՀՀ Սահմանադրական դատարանում, տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների և գլխավոր դատախազի դիմումների հիման վրա իրականացվող գործերի քննությունը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանում ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի, հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի, Ազգային ժողովի ընդունած օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

17. Սահմանադրական դատարանում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու, Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, լիազորությունները դադարեցնելու, Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական գործ հարուցելու համաձայնություն տալու մասին գործերի քննությունը

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում, ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում, Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին համաձայնություն տալու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

Թեմա 18. Սահմանադրական դատարանում Նախագահի լիազորություններն իրականացնելու անհնարինության, Նախագահի պաշտոնանկության հիմքերի առկայության, կուսակցությունների գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ եզրակացություն տալու վերաբերյալ գործերի քննությունը, Նախագահի կողմից հրամանագրերի և կարգադրությունների ընդունման և կառավարության ձևավորման հետ կապված հարցերով գործերի քննությունը

Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն տալու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում, Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում, Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների ընդունման և

կառավարության կազմավորման հետ կապված հարցերով գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում, կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

3. Տեսական բլոկ

3.1. Դասընթացի տեսական մասի նյութերը

3.1.1. Դասագիրք(եր)

1. Հարությունյան Գ.Գ., Մանասյան Ա.Ա., Սահմանադրական վերահսկողություն. Ուս. ձեռն. Եր., «Իրավունք» հրատ/, 2015.- 240 էջ:

2. Սարգսյան Ա.Գ. Մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման արդի հիմնախնդիրները. Եր., «Էդիտ Պրինտ» հրատ., 2015.- 224 էջ:

3. Арутюнян Г.Г. Проблемы совершенствования системы конституционного правосудия. // Журнал российского права. 1999. N9

4. Библиография по конституционному правосудию / авт. - сост. М.А. Митюков; вступ. ст. О.Г. Румянцева, Б.А. Страшуна; Фонд конституционных реформ. - М.: Волтерс Клувер, 2008. - 960 с.

5. Витрук Н.В. Конституционное правосудие. Судебное конституционное право и процесс: уч. пос. для вузов. - М.: Закон и право, ЮНИТИ, 1998.- 376 с.

6. Кряжков В.А., Лазарев Л.В. Конституционная юстиция в Российской Федерации. Учебное пособие. М.,1998.- 462 с.

7. Чиркин В.Е. Органы конституционного контроля: Россия и международный опыт. // Журнал российского права. 1998. N4/5 - 145 с.

3.1.2. Իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 05.07.1995 թվականին (06.12.2015 թվականի և 22.06.2020 թվականի փոփոխություններով)

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք՝

ընդունված՝ 17.01.2018 թվականին

3. ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակարգ՝ ընդունված 09.07.2018 թվականին

3.1.3. Էլեկտրոնային ռեսուրսներ

1. https://www.arlis.am
2. http://old.arlis.am
3. http://www.concourt.am

4. Կարողունակության գնահատման ցուցանիշները և չափանիշները

4.1.1. Վերլուծական կարողություններ

A (88–100 միավոր) «Գերազանց». Ուսանողն առանձնացնում է խնդրի բոլոր էական կողմերը, իրականացնում է ինքնուրույն իրավական վերլուծություն, համեմատում է դոկտրինալ մոտեցումները պրակտիկ խնդիրների հետ:

B (76–87 միավոր) «Շատ լավ». Ուսանողը բացահայտում է խնդրի հիմնական կողմերը, վերլուծությունն իրականացնում է ինքնուրույն եզրահանգումների առանձին տարրերով. ընդհանուր առմամբ ճիշտ է ընկալում թեմաների էությունը:

C (64–75 միավոր) «Լավ». Ուսանողը ճիշտ է որոշում հիմնական կատեգորիաները, սակայն վերլուծությունը կրում է նկարագրական բնույթ. թույլ է տալիս առանձին անճշտություններ:

D (52–63 միավոր) «Բավարար». Ուսանողը վերարտադրում է հիմնական մոտեցումները, սակայն վերլուծությունը մակերեսային է:

E (40–51 միավոր) «Բավարար սահմանային». Ուսանողը տալիս է երևույթների ընդհանուր բնութագիր, սակայն ինքնուրույն վերլուծություն չի իրականացնում. թույլ է տալիս էական սխալներ:

FX (20–39 միավոր) «Անբավարար». Ուսանողը չի կարողանում առանձնացնել խնդրի էական կողմերը, վերլուծությունը բացակայում է կամ կրում է խիստ մակերեսային բնույթ:

F (0–19 միավոր) «Անբավարար». Վերլուծությունն ամբողջությամբ բացակայում է. ուսանողը չի կարող առանձնացնել առարկայի հիմնական կատեգորիաները:

4.2.2. Իրավական փաստարկում

A (88–100 միավոր) «Գերազանց». Ուսանողը ներկայացնում է մանրամասն իրավական փաստարկում՝ հղումներով դոկտրինին, նորմատիվ ակտերին (ՀՀ Սահմանադրություն, ՀՀ օրենքներ) և պետական պրակտիկայի օրինակներին. հիմնավորում է դիրքորոշումը անձի իրավական կարգավիճակի, իրավունքից հրաժարվելու, իշխանության լեգիտիմության հարցերում. կիրառում է համեմատահիրավական մեթոդ:

B (76–87 միավոր) «Շատ լավ». Փաստարկումն ընդհանուր առմամբ հետևողական

է, առկա են առանձին հղումներ իրավունքի նորմերին (ՀՀ Սահմանադրություն, օրենքներ) և գիտական մոտեցումներին. բերում է պրակտիկայի օրինակներ:

C (64–75 միավոր) «Լավ». Փաստարկումը մասնատված է, դոկտրինին և նորմատիվ ակտերին հղումներ կան, սակայն ոչ միշտ են համապատասխան. օրինակները միշտ չէ, որ արդիական են:

D (52–63 միավոր) «Բավարար». Փաստարկումը թույլ է, դոկտրինին հղումները բացակայում են կամ թերի են. նորմատիվ ակտերին հղումները եզակի են:

E (40–51 միավոր) «Բավարար սահմանային». Փաստարկումը կրում է ընդհանուր բնույթ՝ առանց կոնկրետ նորմերի կամ դոկտրինի հղումների:

FX (20–39 միավոր) «Անբավարար». Փաստարկումը բացակայում է կամ չի համապատասխանում առաջադրված հարցին. ուսանողը չի կարող հիմնավորել սեփական դիրքորոշումը:

F (0–19 միավոր) «Անբավարար». Փաստարկումն ամբողջությամբ բացակայում է:

4.1.2. Իրավական փաստարկում

A (88–100 միավոր) «Գերազանց». Ուսանողը ներկայացնում է մանրամասն իրավական փաստարկում՝ հղումներով դոկտրինին, նորմատիվ ակտերին (ՀՀ Սահմանադրություն, ՀՀ օրենքներ) և պրակտիկայի օրինակներին:

B (76–87 միավոր) «Շատ լավ». Փաստարկումն ընդհանուր առմամբ հետևողական է, առկա են առանձին հղումներ իրավունքի նորմերին (ՀՀ Սահմանադրություն, օրենքներ) և գիտական մոտեցումներին. բերում է պրակտիկայի օրինակներ:

C (64–75 միավոր) «Լավ». Փաստարկումը մասնատված է, դոկտրինին և նորմատիվ ակտերին հղումներ կան, սակայն ոչ միշտ են համապատասխան. օրինակները միշտ չէ, որ արդիական են:

D (52–63 միավոր) «Բավարար». Փաստարկումը թույլ է, դոկտրինին հղումները բացակայում են կամ թերի են. նորմատիվ ակտերին հղումները եզակի են:

E (40–51 միավոր) «Բավարար սահմանային». Փաստարկումը կրում է ընդհանուր բնույթ՝ առանց կոնկրետ նորմերի կամ դոկտրինի հղումների:

FX (20–39 միավոր) «Անբավարար». Փաստարկումը բացակայում է կամ չի համապատասխանում առաջադրված հարցին. ուսանողը չի կարող հիմնավորել սեփական դիրքորոշումը:

F (0–19 միավոր) «Անբավարար». Փաստարկումն ամբողջությամբ բացակայում է:

4.1.3. Հստակություն և ընկալելիություն

A (88–100 միավոր) «Գերազանց». Պատասխանը կառուցված է, օգտագործված են ճշգրիտ իրավական հասկացություններ, եզրակացությունները ձևակերպված են պարզ:

B (76–87 միավոր) «Շատ լավ». Պատասխանը բավականաչափ հասկանալի է, տերմինաբանությունն առավելապես օգտագործվում է ճիշտ. առանձին հասկացություններ կիրառվում են ոչ ճշգրիտ:

C (64–75 միավոր) «Լավ». Պատասխանն ընդհանուր է, տերմինաբանությունը միշտ

չէ, որ ճշգրիտ է, թույլ են տրվում սխալներ հատուկ տերմինների գործածության մեջ:

D (52–63 միավոր) «Բավարար». Պատասխանն անհետևողական է, իրավական տերմինաբանությունն օգտագործվում է սխալ կամ բացակայում է:

E (40–51 միավոր) «Բավարար սահմանային». Պատասխանը շփոթեցնող է, տերմինաբանությունը՝ սխալ:

FX (20–39 միավոր) «Անբավարար». Պատասխանն անհասկանալի է, տերմինները չեն օգտագործվում:

F (0–19 միավոր) «Անբավարար». Պատասխանը բացակայում է կամ ամբողջությամբ սխալ է:

4.1.3. Համակարգվածություն և կառուցվածքայնություն

A (88–100 միավոր) «Գերազանց». Պատասխանը տրամաբանորեն կառուցված է, առանձնացված են ներածությունը, հիմնական մասը, եզրահանգումները:

B (76–87 միավոր) «Շատ լավ». Պատասխանն ընդհանուր առմամբ տրամաբանական է, կառուցվածքը մասամբ պահպանված է. եզրակացություններն առկա են, սակայն բավարար մանրամասն չեն:

C (64–75 միավոր) «Լավ». Խախտված է շարադրման տրամաբանությունը, եզրակացությունները բացակայում են կամ չեն համապատասխանում բովանդակությանը. շարադրանքն անհամակարգ է:

D (52–63 միավոր) «Բավարար». Պատասխանն անհամակարգ է, կառուցվածքը բացակայում է. շարադրանքը քաոսային է, չի նկատվում հասկացությունների միջև կապ:

E (40–51 միավոր) «Բավարար սահմանային». Կառուցվածքը գրեթե բացակայում է:

FX (20–39 միավոր) «Անբավարար». Կառուցվածքը բացակայում է կամ խիստ անընկալելի է:

F (0–19 միավոր) «Անբավարար». Կառուցվածքը բացակայում է:

4.2. Ստուգողական առաջադրանքների և գիտելիքների գնահատման համար անհրաժեշտ այլ նյութերի տիպային օրինակներ

4.2.1. Սեմինար պարապմունքների քննարկման հարցեր

1. Դատական սահմանադրական իրավունքը և դատավարությունը՝ որպես իրավունքի ճյուղ, գիտություն և ուսումնական դասընթաց
2. Դատական սահմանադրական իրավունքի և դատավարության աղբյուրները
3. Սահմանադրական վերահսկողություն և սահմանադրական հսկողություն հասկացությունների հարաբերակցությունը
4. Սահմանադրական արդարադատություն, սահմանադրական վերահսկողություն, դատական սահմանադրական վերահսկողություն և սահմանադրական դատավարություն հասկացությունների հարաբերակցությունը
5. Սահմանադրական վերահսկողության սուբյեկտները

6. Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտները
7. Դատական սահմանադրական վերահսկողության օբյեկտները
8. Նախնական և հետագա սահմանադրական վերահսկողություն
9. Վերացական և կոնկրետ սահմանադրական վերահսկողություն
10. Պարտադիր և ֆակուլտատիվ սահմանադրական վերահսկողություն
11. Ֆորմալ (ըստ ձևի) և նյութական (ըստ բովանդակության) սահմանադրական վերահսկողություն
12. Որոշիչ և խորհրդատվական սահմանադրական վերահսկողություն
13. Դատական սահմանադրական վերահսկողության կայացման և զարգացման հիմնական փուլերը
14. Սահմանադրական արդարադատության ամերիկյան մոդելը
15. Սահմանադրական արդարադատության եվրոպական մոդելը
16. Սահմանադրական դատարանը՝ որպես պետական իշխանության մարմին
17. Սահմանադրական դատարանի տեղը և դերը պետական իշխանության մարմինների համակարգում
18. Սահմանադրական դատարանի և այլ դատարանների փոխհարաբերությունները
19. Սահմանադրական դատարանների կազմավորման կարգը
20. ՀՀ Սահմանադրական դատարանի կազմը, կառուցվածքը և ձևավորման առանձնահատկությունները
21. ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կառուցվածքը և լիազորությունները
22. ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմում ծառայությունը
23. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակը
24. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի անկախությունը
25. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի անձեռնմխելիությունը
26. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի անփոփոխելիությունը
27. Այլ գործունեության հետ ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնի անհամատեղելիությունը
28. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի նյութական, սոցիալական և այլ երաշխիքները
29. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարումը և դադարեցումը
30. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի վարքագծի կանոնները
31. ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահը և փոխնախագահը,

նրանց լիազորությունները

32. ՀՀ Սահմանադրական դատարանի գործունեության երաշխիքները

33. Գործերի քննության (վարույթի) սկզբունքները ՀՀ Սահմանադրական դատարանում

34. Սահմանադրական արդարադատության մարմինների ակտերի տեսակները

35. Սահմանադրական արդարադատության մարմինների ակտերի կառուցվածքը

36. Սահմանադրական արդարադատության մարմինների իրավական դիրքորոշումները

37. ՀՀ Սահմանադրական դատարանի ակտերի ընդունման կարգը, դրանց ներկայացվող պահանջները

38. ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները, եզրակացությունները և աշխատակարգային որոշումները

39. Սահմանադրական դատավարության հիմնական փուլերը

40. ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու կարգը

41. ՀՀ Սահմանադրական դատարանում գործերի քննության ընդհանուր կանոնները

42. Սահմանադրական դատավարության մասնակիցները, նրանց իրավունքները և պարտականությունները

43. Գործի վարույթի կասեցումը, վերսկսումը և կարճումը ՀՀ Սահմանադրական դատարանում

44. ՀՀ Սահմանադրական դատարանում գործերի գրավոր/բանավոր ընթացակարգով քննությունը

45. Սահմանադրական դատարանների լիազորությունների հասկացությունը և տեսակները

46. Սահմանադրության մեկնաբանման վերաբերյալ գործերի քննությունը սահմանադրական դատարաններում

47. Սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

48. Իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

49. Անհատական սահմանադրական գանգատի հիմնական տեսակները (մոդելները)

50. ՀՀ Սահմանադրական դատարան անհատական սահմանադրական դիմում

ներկայացնելու կարգը և հիմնական առանձնահատկությունները

51. Հանրաքվեների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծումը ՀՀ Սահմանադրական դատարանում

52. Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծումը ՀՀ Սահմանադրական դատարանում

53. ՀՀ նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծումը ՀՀ Սահմանադրական դատարանում

54. Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության ստուգումը

55. Տեղական ինքնակառավարման մարմինների դիմումների հիման վրա իրականացվող գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

56. Դատարանների և գլխավոր դատախազի դիմումների հիման վրա իրականացվող գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

57. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի, հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը

58. Ազգային ժողովի ընդունած օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

59. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

60. ՀՀ նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն տալու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

61. Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

62. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

63. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

64. Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին համաձայնություն տալու վերաբերյալ գործերի

քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

65. Կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

66. ՀՀ նախագահի հրամանագրերի և կարգադրությունների ընդունման և կառավարության կազմավորման հետ կապված հարցերով գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

4.2.2. Քննության հարցեր

1. Դատական սահմանադրական իրավունքը և դատավարությունը՝ որպես իրավունքի ճյուղ, օրենսդրության ճյուղ, գիտություն և ուսումնական դասընթաց
2. Դատական սահմանադրական իրավունքի և դատավարության աղբյուրները
3. Սահմանադրական հսկողություն, սահմանադրական վերահսկողություն, դատական սահմանադրական վերահսկողություն, սահմանադրական արդարադատություն և սահմանադրական դատավարություն հասկացությունների հարաբերակցությունը
4. Սահմանադրական վերահսկողության սուբյեկտները և սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտները
5. Դատական սահմանադրական վերահսկողության օբյեկտները
6. Դատական սահմանադրական վերահսկողության տեսակները և դրանց առանձնահատկությունները
7. Դատական սահմանադրական վերահսկողության կայացման և զարգացման հիմնական փուլերը
8. Սահմանադրական արդարադատության ամերիկյան և եվրոպական մոդելների առանձնահատկությունները
9. Սահմանադրական դատարանը՝ որպես պետական իշխանության մարմին, վերջինիս տեղը և դերը պետական իշխանության մարմինների համակարգում
10. Սահմանադրական դատարանի և այլ դատարանների փոխհարաբերությունները
11. ՀՀ Սահմանադրական դատարանի կազմը, կառուցվածքը և ձևավորման առանձնահատկությունները
12. ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կառուցվածքը և լիազորությունները, ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմում ծառայությունը
13. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակի հասկացությունը և սկզբունքները
14. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարումը և դադարեցումը
15. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի վարքագծի կանոնները

16. Գործերի քննության (վարույթի) սկզբունքները ՀՀ Սահմանադրական դատարանում
17. Սահմանադրական արդարադատության մարմինների ակտերի տեսակները և կառուցվածքը
18. ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները, եզրակացությունները և աշխատակարգային որոշումները
19. ՀՀ Սահմանադրական դատարանի ակտերի ընդունման կարգը, դրանց ներկայացվող պահանջները
20. Սահմանադրական դատավարության հիմնական փուլերը
21. ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու կարգը և ՀՀ Սահմանադրական դատարանում գործերի քննության ընդհանուր կանոնները
22. Սահմանադրական դատավարության մասնակիցները, նրանց իրավունքները և պարտականությունները
23. Գործի վարույթի կասեցումը, վերսկսումը և կարճումը ՀՀ Սահմանադրական դատարանում
24. Սահմանադրական դատարանների լիազորությունների հասկացությունը և տեսակները
25. Սահմանադրության մեկնաբանման վերաբերյալ գործերի քննությունը սահմանադրական դատարաններում և սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում
26. Իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում
27. Անհատական սահմանադրական գանգատի հիմնական տեսակները (մոդելները)
28. ՀՀ Սահմանադրական դատարան անհատական սահմանադրական դիմում ներկայացնելու կարգը և հիմնական առանձնահատկությունները
29. Հանրաքվեների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծումը ՀՀ Սահմանադրական դատարանում
30. Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծումը ՀՀ Սահմանադրական դատարանում
31. ՀՀ նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծումը ՀՀ Սահմանադրական դատարանում
32. Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության ստուգումը
33. Տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների և գլխավոր դատախազի դիմումների հիման վրա իրականացվող գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

34. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի, հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը

35. Ազգային ժողովի ընդունած օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

36. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

37. ՀՀ նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն տալու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

38. Հանրապետության նախագահի լիազությունների կատարման անհնարինության վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

39. ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

40. Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին համաձայնություն տալու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

41. Կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

42. ՀՀ նախագահի հրամանագրերի և կարգադրությունների ընդունման և կառավարության կազմավորման հետ կապված հարցերով գործերի քննությունը ՀՀ Սահմանադրական դատարանում

4.2.3 Իրավիճակային խնդիրների օրինակներ

Իրավիճակային խնդրի օրինակ թիվ 1

ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ Սահմանադրական դատարան է ներկայացվել դիմում՝ ՍԴ դատավոր Պաշտոնանկ Փողասերյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հարցով: Գործով որպես պատասխանող ներգրավված դատավորին ներկայացրել են վերջինիս չորս ներկայացուցիչները, իսկ որպես ՀՀ գլխավոր դատախազի ներկայացուցիչ է հանդես եկել Երևան քաղաքի դատախազը: Սահմանադրական դատարանը, հանգելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածի՝ Սահմանադրությանը հակասելու համոզմանը, դիմումի մուտքագրումից 72 ժամ հետո փակ գաղտնի քվեարկության արդյունքում (հինգ՝ կողմ, երեք՝ ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ) տվել է Պաշտոնանկ Փողասերյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կապակցությամբ իր համաձայնությունը:

- Վերլուծե՛ք իրավիճակը օրենսդրական գործող կարգավորումների լույսի ներքո և գնահատե՛ք յուրաքանչյուր դրվագի իրավաչափությունը:

Իրավիճակային խնդրի օրինակ թիվ 2

Քաղաքացի Պողոս Պետրոսի Մարտիրոսյանը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի մի քանի իրավանորմերի սահմանադրականությունը ստուգելու խնդրանքով: Որպես դիմումի ընդունելիության պայմանների առկայությունը հիմնավորող հանգամանքներ վերջինս, մասնավորապես, նշել է հետևյալը. ինքը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, գործով առկա է վերջնական դատական ակտ, այն է՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից կայացված վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում, և վիճարկում է իր նկատմամբ գործատուի կայացրած հրամանը՝ աշխատանքային պայմանների էական փոփոխության հիմքով իրեն աշխատանքից ազատելու մասին, որով խախտվել են ՀՀ Սահմանադրության 3-րդ գլխում ամրագրված նորմերը (մասնավորապես՝ հոդված 82՝ աշխատանքային պայմանները, և հոդված 84՝ արժանապատիվ գոյությունը և նվազագույն աշխատավարձը):

- Նման պայմաններում առկա են արդյո՞ք ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից գործը քննության ընդունելու կամ դրա քննությունը մերժելու հիմքեր: Որո՞նք են դրանք:

4.2.4. Տեսական հարցերի օրինակներ

1. Ներկայացրեք դատական սահմանադրական վերահսկողության *նախնական և հետագա* ձևերի առանձնահատկությունները
2. Ի՞նչ են իրենցից ներկայացնում գործի հանգամանքների *ի պաշտոնե պարզման և իրավահավասարության* սկզբունքները
3. Ներկայացրե՛ք ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից *կայացվող ակտերի տեսակները և դրանց առանձնահատկությունները*

4.2.5. Թեստային հարցի օրինակ

1. Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուները՝

ա) պետք է տիրապետեն առնվազն մեկ օտար լեզվի

բ) պետք է տիրապետեն հայերենին և ազնվազն մեկ օտար լեզվի

գ) պետք է տիրապետեն հայերենին

4.3. Մեթոդական նյութեր, որոնք սահմանում են գնահատման ընթացակարգերը

4.3.1. Գիտելիքների ընթացիկ հսկողության ձևերը

Սեմինար պարապմունքները ներառում են տեսական հարցերի բանավոր քննարկում: Գնահատվում են ընկալման խորությունը, փաստարկելու կարողությունը,

տերմինաբանությանը տիրապետելը:

4.3.2. Ստեստավորման ձևը (ստուգարք, քննություն)

Ընթացիկ ստուգարքը անցկացվում է գրավոր ձևաչափով: Տոմսի կառուցվածքը ներառում է թեստային հարցեր, տեսական հարցեր և մեկ իրավիճակային խնդիր: Կատարման ժամանակը 60 րոպե է: Ուսանողներին չի տրամադրվում լրացուցիչ նյութեր, սակայն դասախոսի հայեցողությամբ թույլատրվում է օգտագործել նորմատիվ ակտերի տեքստեր:

Քննությունն անցկացվում է բանավոր ձևաչափով: Տոմսի կառուցվածքը ներառում է երեք տեսական հարց՝ ըստ հարցաշարի:

4.3.3. Գնահատման ընթացակարգը

Յուրաքանչյուր պատասխան գնահատվում է 0–100 միավոր սանդղակով՝ հետագա փոխարկմամբ 7-բալյա համակարգի: 88–100 միավորի դեպքում տրվում է A (գերազանց), 76–87-ի դեպքում՝ B (շատ լավ), 64–75-ի դեպքում՝ C (լավ), 52–63-ի դեպքում՝ D (բավարար), 40–51-ի դեպքում՝ E (բավարար սահմանային), 20–39-ի դեպքում՝ FX (անբավարար), իսկ 0–19-ի դեպքում՝ F (անբավարար):

4.3.4. Գնահատման չափանիշներ

Գնահատելիս հատկապես հաշվի են առնվում պատասխանի վերլուծական բնույթը (այլ ոչ թե սահմանումների պարզ թվարկումը), իրավական փաստարկման առկայությունը (ինչու է տվյալ մոտեցումը ճիշտ), կոնկրետությունը (հղումներ նորմատիվ ակտերին, դոկտրինալ դիրքորոշումներին, օրինակներին), ինչպես նաև կառուցվածքայնությունը (ներածություն, հիմնական մաս, եզրակացություն յուրաքանչյուր ենթակետի համար):

4.3.5. Ուսանողների նախապատրաստման առաջարկություններ

Սեմինար պարապմունքների համար անհրաժեշտ է մշակել լրացուցիչ ուսումնական կամ դոկտրինալ աղբյուրներ յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ:

Իրավիճակային խնդիրը լուծելիս պետք է հաջորդաբար կիրառել հետևյալ սխեման. *փաստեր → իրավական խնդիր → նորմ/դոկտրին → փաստարկում → եզրակացություն:*

Ստուգարքի ժամանակ խորհուրդ է տրվում հստակ կառուցել պատասխանը՝ ներածություն, հիմնական մաս, եզրակացություն, ճիշտ օգտագործել իրավական տերմինաբանությունը, անհրաժեշտության դեպքում հղումներ կատարել ՀՀ Սահմանադրությանը և ՀՀ օրենքներին, ինչպես նաև հիմնավորել իր դիրքորոշումը՝ հղումներով դոկտրինալ մոտեցումներին:

Քննություն. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները և պատրաստվածությունը ստացված գիտելիքների արդյունքում: